



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՎԱՐԴԱՆ ԴԱՐՔԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 400-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 405-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Վարդան Դարբինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի և 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. Վարդան Դարբինյանը (ներկայացուցիչ՝ Սիմոն Բաբայան) 2020թ. սեպտեմբերի 11-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթը իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին, 79-րդ հոդվածին հակասող և անվավեր,

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400 հոդվածի 1-ին մասի դրույթը, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբա-

նությանը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր»:

2. Դիմողը նշում է, որ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3200/02/16 քաղաքացիական գործով կիրառելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթը, բեկանել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը և օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի վճիռն՝ տվել է նոր պատճառաբանություն՝ փոփոխելով կիրառելի իրավահարաբերության տեսակը, միաժամանակ, դիտարկելով, որ առաջին ատյանի դատարանի վճիռն իր պատճառաբանությամբ դատական սխալ էր պարունակում: Դիմողը պնդում է, որ նշված նորմի կիրառման պարագայում, օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի վճիռն, Վճռաբեկ դատարանը չունի լիազորություն փոփոխելու դրա պատճառաբանական մասը կամ նորովի պատճառաբանելու այն: Դիմողի կարծիքով՝ նշյալ դրույթի կիրառման կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում ի հայտ է գալիս իրավական անորոշության իրավիճակ: Ըստ դիմողի՝ հայցելով իր խախտված իրավունքների դատական պաշտպանությունը կամ որպես պատասխանող հանդես գալով քաղաքացիական դատավարությունում՝ անձը պետք է հնարավորություն ունենա կանխատեսելու կայացվելիք դատական ակտի հետևանքները, ինչը պայմանավորված է նաև յուրաքանչյուր դատական ատյանում տվյալ դատարանի լիազորություններով:

Դիմողը գտնում է, որ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3200/02/16 քաղաքացիական գործով կիրառելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, գործի քննությունն իրականացրել է մեկ տարի և յոթ ամիս ժամկետում՝ խախտելով Սահմանադրությամբ երաշխավորված՝ գործի քննության ողջամիտ ժամկետները: Դիմողը պնդում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը՝ Վճռաբեկ դատարանի կողմից իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանություններով.

3.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի մասով

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը նշյալ դրույթի մասով բարձրացրել է Վճռաբեկ դատարանի կողմից դրա կիրառման իրավաչափության հարց՝ դրա ենթադրյալ հակասահմանադրականության լույսի ներքո: Սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ «... բոլոր այն դեպքում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց (...), ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»: Սահմանադրական դատարանը վերահաստատում է նշված դիրքորոշումը նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով:

Շտուկաբար, սույն դիմումով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը որոշելու պահանջի մասով գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

3.2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի մասով

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը կարող է մերժվել այն դեպքում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: Սույն պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառ-

ված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Միաժամանակ, դիմողը պետք է նաև պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության արդյունքում իր ո՞ր սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Այս պահանջները չպահպանելը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նշյալ դրույթների մասով դիմողը չի պահպանել վերոշարադրյալ օրենսդրական պահանջները:

Հետևաբար, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի սահմանադրականությունը որոշելու պահանջի մասով անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ինչի հիմքով այս մասով ևս դիմումի քննությունը ենթակա է մերժման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Վարդան Դարբինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի և 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

23 նոյեմբերի 2020 թվականի
ՍԴԱՈ-213